որբերի ազգականները և թէ՞օտարները: Եթը ուրերը 14 տարեկան են դառնուում, այն ժամանակ նրանք կարող են մատնացոյց անել իշխանութեան, այս կամ այն անձնաւորութեան իրանց խնամատար նշանակելու մասին: Իսկ եթը 17 տարեկան են դառնուում, կարող են կառավարել իրանց կայքերը, միայն պայմաններ կապել, մուրհակներ տալ և կամ կայքերի մէջ փոփոխութիւն մտցնել առանց խնամատարի թոյլատութեան, չեն կարող:

Խնամատար ընտրելիս ի նկատի պէտք է ունենալ այնպիսի անձնաւորութիւններ, որոնք իրանց բարոյական արժանաւորութիւններով լուսալի են որբերի պահպանութեան և բարոյական կրթութեան համար: Լստ այսմ միանդամայն արգելուում է խնամատար ընտրել 1) այն անձանց, որոնք վատնել են իրանց սե-

փական կամ Հայրական կայքերը.  
 2) Նոցա, որոնք վարքի կողմից յայտնի կամ ծածուկ արտաւոր են: 3) Այն անձանց, որոնք զբկւած են քաղաքացիական իրաւունքներից և գոյքերից 4) Նոցա, որոնք իրանց չափաղանց անպարկեշտ ընաւորութեամբ յայտնի են ամեքին: 5) Այն մարդկանց, որոնք անձնական հաշիւ կամ պահանջ ունին որբերի ծնողների հետ և 6) Նոցա, որոնք նիւթական միջոցից զուրկ են:

Որբապատական բոլոր շարժական և անշարժ կայքերը յանձնուում է խնամատարին առանձին ցուցակով, որին ներկայ են լինում մարմնաւոր իշխանութեան պաշտօնեալին և երկու վկաներ: Ցուցակի մի օրինակը բոլորի ստորագրութեամբ սւզարկւում է պատշաճաւոր իշխանութեան այսինքն՝ կամ ազնւականների խնամատարութեան (Дворянская

օպեկա) կամ Որբերի գատարանը (Сиротскій судъ) և կամ որտեղ չկան այս հաստատութիւնները, տեղական հաշտարար դատաւորին (Мировой судья) իսկ մի այլ օրինակը նոյն ստորագրութիւններով մնալու է խնամատարի մօտ:

Խնամատարի պարտականութիւնն է առհասուակ որբապատական գոյքերը կառավարել և շահեցնել ամենայն զգուշութեամբ իւր հայեցողութան համեմատ: Տարեկան թէ եկամուտների և թէ ծախսերի համար ունենալու է կանոնաւոր մատեան: Որբապատական ստանալիքները աշխատելու է իւր ժամանակին հաւաքել և եթէ որոշ ժամանակամիջոցով է, չանցկացնել իրաւունքի սահմանը, հակառակ դէպքում եթէ կորուստ յաւացանայ, այն ժամանակ խնամատարին է պատասխանատու:

Քանի դեռ որքերը փոքր են և օրինական խնամատար չէ նշանակւած, նոցա ունեցած շարժական կամ անշարժ կայքը պարտքի կոմ ազ պատճառով չի կարող ծախւել. իսկ եթի խնամատար նշանակւած է, կարող է ծախւել, միայն հետեւալ հանգամանքներում. 1) Այն երեքը, որոնք կարող են շուտ փշանալ և թէ անհրաժեշտ է վաճառել որբերի պահպանութեան համար, խնամատարները կարող են վաճառել, միայն թէ տարեկան հաշիւներկայացնելիս, այս մասին ևս պէտք է տեղեկութիւն տալ պատշաճաւոր իշխանութեան. 2) Ուկեղէն և արձաթեղէնները և ամեն տեսակ թանկագին ակնեղէնները կարելի է վաճառել, եթի անհրաժեշտ որբերի պարտքերը հատուցանելու և կամ նոցա խնամելու համար:

Անշարժ կալւածները կարելի է

վաճառել 1) Եթե չափահաս ժառանիդները ցանկանում են ըաժին ստանալ անչափահաս որբերից իւրանց հասանելիք մասը; 2) Եթէ ժառանդութեան հետ միասին որբերի ծնողներից պարտքէ մնացած և անհրաժեշտ է այդ պարտքերը վճարել; 3) Եթե կալւածքը բոլորովին քայքայւած է և քանդուելու վտանգ կաց: Առհասարակ այն դէպքերում, եթե անհրաժեշտ է անշարժ կայքերը վաճառել, խնամատարը այս մասին տեղակացնելու է իրան պատշաճաւոր իշխանութեան, ուսոնք այս մասին տեղեկութիւններին կտան նահանդապետին, իսկ վերջին եզրիւր եղբակացութեամբ ներկայացնում է կառավարիչ սենատին, որտեղից ստացւում է վաճառելու իամ չվաճառելու իրաւունքը: Խնամատարը նայելով հանդամանքին, կարող է որբապատկան կայքերը գրաւ դնել

Եզր այդ պահանջում են որբերի շահերը միայն դարձեալ իշխանութեան թույլատութեամբ:

Եթէ խնամատարները որբապատկան գոյքերը յանձնում են շահեցնելու նպատակով մի ուրիշին և վերջինս սնանկանում է և անձեռնահաս է դառնում վճարելու, պատասխանատու մնում է ինքը խնամատարը: Եւ կամ ինքն է գործադրում որբերի կայքը և վնասուում, դարձեալ օրէնքի առաջ պատասխանատուն ինքն է: Մի խօսքով բոլոր այս տեսակ դէպքերում օրինական խիստ պատասխանատութեանէ ենթարկում ինքը խնամատարը:

Իւրաքանչիւր տարի լրանալուն պէս, խնամատարները անպատճառ ներկայացնելու են իրանց իշխանութեան տարեկանկան կանոնաւոր հաշիւ, եկամուտի, ծախսերի որբերի դրութեան, նոցա կըթութեան (եթէ

այդպիսիք կան) և ապօռուտի մասին: Իոկ խնամատարութեան ժամանակամիջոցը վերջանալիս, ներկայացնելու են ընդհանուր մանրամասն հաշիւ: Խնամատարները թէ առաջին թէ երկրորդ դէպքում եթէ հաշիւը իւր ժամանակին չներկայացնեն, կենթարկուին օրինական պատասխանատութեան կամ դրամական տուգանքի:

Խնամատարները իրանց աշխատանքի համար իւրեւ վարձ կարող են ստանալ որբապատկան (եկամուտ) գոյքերից  $5\%$ , այսինքն 100 րուբլուն 5 ըուբլի:



## ԲԵՇԻՆՈՒԹԵԸՆ ՕՐԵՆՔՆԵՐ

Ծնողները և ազգականները իրաւունք ունին բաժանել իրանց որդոցը տալով՝ նրանց իրանց սեփական ունեցւացքից որոշ մասն Որդեքը մինչև չափահաս չգառնան, իրաւունք չունին Հայրական կարողութիւնից իրանց Հասանելիք բաժին պահանջել: Ծնողները և ազգականները իրանց սեփական կարողութիւնից ժառանգներին կարող են այնքան բաժին Հանել, ինչքան որ իրանց կամքն է. բայց ժառանգական կայքից, պարտաւոր են իրաքանչիւրին օրէնքով Հասանելիք մասը տալ: \*) Որդեքը դեռ ծնողների կամ ազգականների մեջ խօսքով կալաւատիրոջ կենդանութեան ժամանակ ստանալով իրանց Հասանե-


\*) Տես „Ժառանգութեան օրէնք“ 1899 թ. ծոցի օրացոյց „Նիրակու:

լիք այն մասը, որ պիտի ստանալին նոցա մահւանից յետով, համարում են բաժանում և մնացած կարգի վերջին բաժանման ժամանակ իրաւունք չունին մասնակցելու: Իսկ եթէ իրանց Հասանելիք ժառանգութեանից մասը լրիւ իրանց բաժին չէ տւած, այդ դէպքում վերջին բաժանման ժամանակ կարող են ստանալ իրանց պակաս տրւած մասը:

Այն օրդեքը, որոնք իրանց Հասանելիք բաժինն ստացած լինելով բաժանւած են, բայց իրանց ստորագրութեամբ ըոլորտվին չեն զբկել այլես ժառանգութիւն ստանալու իրաւունքից, կարող են միւս ժամանգների հետ դարձեալ Հաւասար բաժին ստանալ:

Բաժանման կապակցագիրը կատարեւում է առանձին թղթով և եթէ անշարժ կալւածներ է բաժին

տրւում, պէտք է անպայման հաս-  
տատուն օրինական կարգով անել  
(քրիստոնութիւնը ուղարկում է առաջին առաջան-  
ում, կարելի է բաժանման գիրը  
(запись) նոտարի մօտ անել և հա-  
սարակ կերպով տանը:



Բաժանութեան գրի օրինակներ.

### Ա) ԲԱԺԱՆԱԳԻՐ

Հազար ինն հարիւր թւի թուն-  
վարի մէկին, Ես ՚ի ներքոյ ստորա-  
գրեալ Աղէքսանդրապօլ քաղաքի  
բնակիչ Ա կարգի վաճառական Յա-  
րութիւն Կարապէտեան Գորոյեան-  
ցըս իմ որդի Գառնիկ Յարութիւ-  
նեան Գորոյեանցին տւի իրան Հա-  
սանինելիք բաժինը իմ սեփական բո-

լոր շարժական և անշարժ կայքից  
արժողութեամբ հինգ հազար ըուբ-  
նի, որով և այդ բոլորը իմ որդի  
Գառնիկը ստանալով, պէտք է իրան  
բաժանւած համարէ, չունենալով  
իրաւունք իմ մահւանից չիտոյ մը-  
նացած իմ շարժական և անշարժ  
կայքից ստանալու, որը ես տալու  
եմ իմ միւս որդոցը: Առ որ ստո-  
րագրում եմ. Աղէքսանդրապօլու Ա  
կարգի վաճառական Յարութիւն Կա-  
րապէտեան Գորոյեանց:

Այս բաժանութեան թուղթը և  
իմ հայրական կարողութիւնից ինձ  
հասանելիք մասը լրիւ ստացայ և  
մնացած բոլոր շարժական և ան-  
շարժ կայքից հրաժարւած եմ՝ Գառ-  
նիկ Յարութիւնեան Գորոյեանց:  
Վկայ եմ Աղքէսանդր Յարութեան  
վկայ եմ Աւետիք Խոսհակեան:



Բ) ԲԱԺԱՆԱԳԻՐ

Հազար ինն հարիւր թւի Յունիարի մէկին. Մենք ի ներքոյ ստորագրեալ Աղէքսանդրապոլ քաղաքի ընակիչ եղբարք Յովլաննէս, Մըկրտիչ, Առաքել Սագինեան Միքայէլեանցներս մեր հայրական բոլոր թէ շարժական և թէ անշարժ կայքը ներկայութեամբ մեր համաքաղաքացին պլ. պլ. Տիգրան Շաղինեանցի և Աշոտ Գրիգորեանցի, բաժանեցինք մեր մէջ ամենայն բարեխղճութեամբ, որ և մեզանից իւրաքանչիւրը թէ շարժական և թէ անշարժ կայքից լրիւ ստանալով իւր հասանելիք բաժինը, չունինք իրաւունք ապագայում մէկս միւսից այս մասին առանձին պահանջ ցայտնելու: \*) Առ որ ստորագրուն ենք  
\*) Կարելի է յիշատակել մի առ մի, ստացած երերի անունը, չափը, կշիռը, արժէքը, տարածութիւնը և այլն:

Յովլաննէս Սագինեան Միքայէլեանց, Մկրտիչ Սագինեան Միքայէլեանց, Առաքել Սագինեան Միքայէլեանց: Վկայ եմ Տիգրան Շաղինեանց, վկայ եմ Աշոտ Գրիգորեանց:

# ՆՈՏԵՐԻՈՒՄԻ ՎԱՐՉԱԾՔԻԹԵԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ

1. Նոտարական ակտեր կազմելու Համար պիտք է վճարել.

Մինչև 500 բութի գումարը 2 թ.

501 1000 թ. 3 թ.

1000-ից աւելի գումարին 4 թ.  
ևս  $\frac{1}{10}$  տոկոս. (10 կ. 100 թ.) ակտ  
գումարից:

2. Փոխառութեան թղթերի, մուլ  
հակների և սոցա պրոտեստի Հա-  
մար պիտք է վճարել. — մինչև 500  
թ. գումարին 50 կ. 500-ից աւելին  
1 թ. ևս  $\frac{1}{10}$  տոկ. (10 կ. 100 թ.)  
ընդհանուր գումարից:

3. Պայմանագրերի վաւերացման  
Համար, որ յեշատկւած է Խզ. 1  
зак. գրաжд. (ст. 128 п. 6 пол.) 1,  
2 և 4 կէտերում, մինչև 500 բութի  
գումարին 1 թ. 500—1000 թ. 50 կ.  
ևս  $\frac{1}{10}$  տոկոս. (10 կ. 100 թ.) պայ-  
մանագրի գումարից:

4. Ակտեր և պայմանագրեր կազ-  
մելու և վաւերացնելու Համար, ո-  
րոնց արժեքը չէ նշանակւած, պիտք  
է վճարել 1000 թ. գումարի արժու-  
յութեան վարձ:

5. Պատճեններ (կոպիա) վաւերա-  
ցնելու Համար, պիտքէ վճարել ա-  
ռաջին թերերթի Համար 25 կ. իսկ  
միւս թերերթին 10 կ. Հաշւելով ա-  
նեն մի թերթը 25 տող:

6. Ստորագրութիւնները վաւերա-  
ցնելու Համար պ. վ. իւրաքանչիւր  
ստորագրութեան Համար 10 կ.

7. Հաւատարմագրեր, (довѣренность)  
Համախօսական թղթեր (мировой  
запись) կազմելու կամ վաւերացնե-  
լու Համար պիտք է վճարել.

1 թերթի Համար 1 թ.  
իսկ մի քանի թերթերի Համար,  
առաջին թերթին 1 բութ. մնացած  
ներին 50 կոպ.

Ուրեմն վաւերացումների Համար. —

առաջին թերթին-50 կ. Հետևեա  
թերթերին-20 կ.

8. Փաստաթղթեր (գոկումենտներից առաջացնելու ժամանակը վաւերացնելու համար-25 կ.

9. Զանազան թղթեր ակտի գրք մէջ մտցնելու համար, ակտի գրք պահ տալու համար պէտք է վճաւրաքանչիւր տողին-2 կ.

10. Գանձարանից կենսաթոշա (պենսիա) ստացող մարդկանց կենդանի լինելը վկայելու համապէտք է վճարել.—Տարեկան մինչ 30 ը. կենսաթոշ. ստացողին 3 կ 30-300 ը. " " 10 " 300-ից աւելին " 20 " Մնացած այլ դէպքերում բացի կեսաթոշակից-50 կ.

11. Մէկի կողմից միւսին յայտարարելու և այդ առթիւ վաւերաթուղթ ստանալու համար պէտք վճարել 50 կ.

12. Վաւերաթղթերի մէջ հակա-

ռակ կողմի բողոքը մտցնելու համար (142 չոդ. ցիշատակւած)-50 կ.

13. Զանազան փաստաթղթեր (գոկումենտ), և այլ տեսակ թղթեր, բացի գրամականներից, նօտարի մօտ պահ տալու համար պէտք է վճարել իւրաքանչիւր գոկումենտի համար-25 կ. իսկ կնքւած ծրաբների համար 50 կ. ամսական և այն վեց ամսականը միանւագ սկզբից պէտք է վճարել:

14. Կատարւած կամ վաւերացրած զանազան ակտերի ժամանակը տեղեկանալու և այս առթիւ գրաւոր հաստատութիւն տալու համար-50 կ.

15. Երկրորդ կամ մի քանի անգամ քաղլւածքներ (ՅԱՊԱԾ) դուբս տալու համար իւրաքանչիւր տողին 1 ը.


16. Նօտարիուսին իւր պաշտօնաւենեակից (կօնտօրա) դուբս կա-

տարած գործի Համար, պէտք վարձատրել բացի գործի Համար սրոշւած գնից, նաև, մայրաքաղաք Ներում — 3 թ. նահանգական քաղաքներում — 2 թ. գաւառական քաղաքներում — 1 թ.

17. Նօտարիութին քաղաքի սահմանից դուրս տանելու Համար Ճանապարհածախս գնալու և գալու Համար պէտք է վճարել ամեն վերստին 10 կ. իսկ Երկաթուղով գնալիս, պէտք է վճարել թէ գնալու և թէ գալու Համար II կարգի տոմսիկի գին: Բացի սրանից Ճանապարհին կորցրած ժամանակի Համար պէտք է վճարել Մայրաքաղաքներից — 5 թ. նահանգական քաղաքներից — 3 թ. մնացած այլ տեղերից — 2 թ. եթէ միայն գնալ գալի ամբողջ օրւանից (սուրբ) աւելի շէ տեղել. Հակառակ դէպքում ամեն օրւաց Համար (ոչ ամբողջ օրն էլ ու

Հաշտում) վերոշիշեալ գնի Համեմատ պէտք է վարձատրել:

18. Նօտարիութ կարող է հենց սկզբից իրան Հասանելիք վարձը պահանջել երբ նրան Հրաւերում են պաշտօնասենեակից դուրս գործեր կատարելու:



## VI. ՔԱՂԱՔՎԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆ

Այցելութիւնները լինում են տեսքեղ հետ շատ մտերիմ են և խընդասակ տեսակ, գլխաւորները կարելի լում են որ մնաս, կարող ես մնալ: Համարել այցելութիւն պարտաւորութեան, ուրախակցութեան, ցարաց ում էլ որ պատահես պէտք է ւակցութեան և հրաւերի: Հրաւերը բարե տաս. նոյնպէս պէտք է բացելութիւնը, այսինքն երբ գըմես քեզ ներս հրաւերողին: Նուում ես մէկին սեղանի կամ պարութեան, պէտք է լինի շատ կարծ ձեռքումդ չպահես. պէտք է զգուշ և կէս օրից յետոյ: Ցաւակցութեան լինիս, ոտնամաններդ ևս շատ ձայն գնացողի հագուստը դարդարուն չհանեն: Եթէ որ գահլիճից նոր այց չպէտք է լինի: Պարզ բարեկամացնելու է ներս մտնում, թէ որ տըկան այցելութիւնները կէս օրից աղամարդ է, տեկինները թեթև կերպաջ ևս կարող են լինել պարզ պով պէտք է շարժւին տեղից, իսկ վայելուչ հագուստներով:

Կէս օրից առաջ որ և է տիկինով պէտք է ստքի կանգնեն: Այցելութեան գնալը վայել չէ. Եթէ Զգուշացիք, որ այցելութեան ժամանակ օրից յետոյ ես գնում, չպէտք մանակ ժամացոյցի չնայես կամ է շատ մնաս. Եթէ այդ ժամանակ ժամը քանիսը լինելը չհարցնես, պինի թէ գետնին թքես, այլ թաշ-

մի ուրիշ այցելու ներս մտնի, շուտ մնաս բարե ասա ու դնա: Խսկեթէ տանտէրը կամ նոր եկող հետքը կամ շատ մտերիմ են և խընդասակ, գլխաւորները կարելի լում են որ մնաս, կարող ես մնալ: Դուռը կամ սանդուխտների վերութեան, ուրախակցութեան, ցարաց ում էլ որ պատահես պէտք է ւակցութեան և հրաւերի: Հրաւերը բարե տաս. նոյնպէս պէտք է բացելութիւնը, այսինքն երբ գըմես քեզ ներս հրաւերողին: Եթէ ձեռքդ գաւազան ունես, հրաւերելու, պէտք է լինի շատ կարծ ձեռքումդ չպահես. պէտք է զգուշ և կէս օրից յետոյ: Ցաւակցութեան լինիս, ոտնամաններդ ևս շատ ձայն գնացողի հագուստը դարդարուն չհանեն: Եթէ որ գահլիճից նոր այց չպէտք է լինի: Պարզ բարեկամացնելու է ներս մտնում, թէ որ տըկան այցելութիւնները կէս օրից աղամարդ է, տեկինները թեթև կերպաջ ևս կարող են լինել պարզ պով պէտք է շարժւին տեղից, իսկ վայելուչ հագուստներով:

Եթէ տիկին է եկողը, բոլորը միասին պէտք է ստքի կանգնեն:

Զգուշացիք, որ այցելութեան ժամանակ օրից յետոյ ես գնում, չպէտք մանակ ժամացոյցի չնայես կամ է շատ մնաս. Եթէ այդ ժամանակ ժամը քանիսը լինելը չհարցնես, պինի թէ գետնին թքես, այլ թաշ-

կինակդ գործածեք:

Ներս որ մտաք գլխարկդ աթոռուի  
կամ սեղանի վերաց դնելը մեծ ա-  
մօթ է. անկողնի վերաց դնելը աւե-  
լի ևս ամօթ է. ուստի կամ պէտք  
է վերաբերեալ հետ մօտի սենեակը  
թողնես, կամ ձեռքդ ըռնած պա-  
հես, եթէ ասեն վարդիր, այն ժա-  
մանակ կարող ես դնել:

Ոտք ոտքի վերաց զբած նոտելը  
մարդավարութիւն չէ, ոտքը երկա-  
րացնելը աւելի ևս անմարդավարու-  
թիւն է:

Տիկինները երեքք պարտաւոր չեն  
այցելութեան եկողին ոտքի կանգ-  
նելով ընդունել և ոչ էլ մինչեւ զու-  
ռը նրանց ճանապարհ դնել:

Եթէ գահլվճէ մէջ տիկիններ կան,  
երիտասարդին վահել չէ թիկնա-  
թոռի վերաց նոտել. նաև վառա-  
րանի մօտ եղած աթոռը տարիքով  
կամ աստիճանով բարձր մարդկանց

պէտք է թողնել:

Տան մէջ եղած երեխաները պէտք  
է իրանց ծնողներին օգնեն այցե-  
լուներին ընդունելու ժամանակ,  
տիկնանց շալերն առնեն, նոցա ա-  
թոռ հրամցնեն, նոյնպէս պէտք է  
օգնեն նրանց ճանապարհ գցելու  
ժամանակ:

Ինչ ընկերութեան մէջ էլ որ լի-  
նիս, կնոջ առջեւ գլխարկ ծածկած  
նոտելը մեծ ամօթ է:

Այցելուն երբ գնալու լինի, մին-  
չեւ գուռը հետը պիտի գնացողը  
գուռը բանսո. իսկ եթէ գնացողը  
կին է կամ ծերունի, մինչեւ սան-  
դուխտների գլուխը ճանապարհ  
դնելը աւելի լաւ է: Դունից գուրս  
գտնած քերոցի կամ խորի վրաց  
ստնամաններդ մաքրելը չմոռանաս.  
Մինի թէ ցեխոտ ոտներով դահլիճ  
մտնես:

Դահլիճէ մէջ եղած կահկարասի-

## VII. ԶԻՆԿՈՐԱԳՐԱԿԱՆ

Ընտանեկան դրութեան վերս-  
բելեալ արտօնութիւններ.

Ների վերայ շարունակ նայելէն ըզ-  
գուշացիք, թէ չէ այն տպաւորու-  
թիւնը կթողնես, որ երբեւ եկել ես  
այդ բանէքը փողավ առնելու:

Այցելութեան ժամանակ ձեռնոց-  
ներդ չպիտի հանես. իսկ ձեռքով,  
գլխարկիդ մազերը ուղղելը կամ  
մաքրելը անքաղաքավարի մարդկանց  
պիտի թաղնես:

Եթե որ մէկը դամլիք մտնի, պէտք  
է որ տանտէրը ստքի կանգնի. միայն  
դրասեղանի առաջեւ նոտած մարդը  
որ աշխատութեամբ է զբաղւած, ա-  
զատ է այս պարտքից:

Կանաչք իրանց այցետոմսի վերայ  
իրանց բնակութեան փողոցն ու  
թւահամարը չպիտք է գնեն և տը-  
ղամարդկանց ոչ այցետոմս պիտի  
տան և ոչ է ուղարկեն:

Յօդ. 45. Առաջին կարգի ար-  
տօնութեամբ օգտառմ են ա) միակ  
աշխատանքի ընդունակ որդին, որի  
հայը աշխատանքի անընդունակ է  
կամ մայը այցի: բ) Միակ աշխա-  
տանքի ընդունակ եղբայրը, որը ու-  
նի մէկ կամ մի քանի որբ եղբայր-  
ներ կամ քոչըեր: գ) Միակ աշխա-  
տանքի թոռը, որի պապը կամ տա-  
տը աշխատանքի ընդունակ որդի  
չունին. դ) Ընտանիքի միակ որդին,  
եթէ մինչև անդամ նա ունենայ  
աշխատանքի ընդունակ հայր. ե)  
Այն ապօբինածին զաւակը, որի հո-  
գացողութեան ներքոյ է աշխատան-  
քի ընդունակ ուրիշ որդիք չունեցող

իւր մայրը կամ քոյրը կամ թէ աշաւատանքի անընդունակ եղբայրը:

Այս արտօնութեամբ օգտուում են նաև ա) Աշխատանքի անընդունակ աներոջ կամ այրի ջոքանչի ընտանիքում միակ աշխատանքի ընդունակ փեսան, եթէ վերջնս ապրում է աներոջ կամ այրի ջոքանչի հետ միևնույն տնտեսութեամբ և կամ նրա հետ մի ծուխ են կազմում (տնփեսայ). բ) Ընտանիքաւոր միանակները:

Եկլորդ կարգ. Աշխատանքի ընդունակ միակ որդին, որի հայրը նոյնպէս աշխատանքի ընդունակ է քայլ որը ունի մէկ կամ մի քանի աշխատանքի անընդունակ եղբայրներ: (Յօդ. 46)

Երրորդ կարգ. Այն անձը, որ տարբերով անմիջապէս հետեւում է այն եղբայրը, որը զինւորակոչով իսկական ծառացութեան մէջ է գտնւում, կամ

նեռել է աչդ ծառացութեան մէջ կամ անցած կերպով կորել է պատերազմում:

Ծանօթ. Այն օտար դաս ակները, որոնք որդեգրել են օրինական Ճանապարհով մինչեւ տասը տարեկան հատակը, համարում են հարազատ որդիք:

Յօդ. 46. Ընտանիքի մէջ աշխատանքի ընդունակ համարում են 18 տարեկանից մինչեւ 55 տարեկան անձինք բացի հետեւեալ անձնաւորութիւններից 1) Հետանդութեան պատճառով աշխատել շեմարողացողները: 2) Աքսորւածները 3) Երեք տարի անցածութեան մէջ կորածները 4) Զինւորական հաստատ ծառացութեան մէջ գտնւածները:

Յօդ. 47 Արտօնութիւն ունեցողները զինւորական ծառացութեան են կանչւում միայն այն գէպքերում, երբ նորակոչ զինւորների թիւը լը

ըացնելու Համար բաւական չեն լինում վիճակահանութեան կանչւածները:

Յօդ. 201 Այն գանգատները, որոնք արւում են մասնաւոր զինւորակոչական ցուցակներ կազմող հենապետութիւնների և պաշտօնատար անձանց դէմ այդ ցուցակների մէջ մտցրած անձտութիւնների մասին, պէտք է ներկայացւեն երկու շաբաթւայ ընթացքում, Հաշւելով՝ մասնաւոր զինւորակոչական ցուցակները ներկայացնելու Համար 118. գյոդ. որոշւած վերջնական Ժամանակամիջոցի օրից (մայիսի 1-ից):

Յօդ. 205 Գաւառական շրջանի և քաղաքային ատեանների դէմ տըրուղ գանգատները, թէ զինւորակոչական ցուցակների անձտութեան վերաբերմամբ, թէ արտօնութիւններ նշանակելու և ծառայութեան պիտանի լինելու վերաբերմամբ, ներ-

կայացնում են նահանգական կամ վիճակային զինւորագրական ատեաններին 4 շաբաթւայ ընթացքում, Հաշւելով վճիռը Հաշւելու օրից:

օդ. 211 Արտօնութիւններ նշանակելու անձտութիւնները և կամ զինւորական ծառայութեան Համար պիտանի լինելը որոշող անձտութիւնների Համար տւած գանգատների մասին՝ նահանգական կամ վիճակային ատեանների կայացրած վճիռների դէմ թոյլ է տրւում գանձիւնների դէմ 118. գյոդ. որոշւած վերջնական Ժամանակամիջոցի օրից (մայիսի 1-ից):

Նորակոչ զինւորների շափը տես օրացուցիս վերջում:



### VIII. ԲԺՇԿԱԿԱՆ

Այլուածք. — Թէթև այրւածքի համար պէտք է մի գդալ սոդա խառնել մի բաժակ ջրի մէջ, շորը թրջել այս խառնուրդի մէջ և դնել այրւած տեղերի վերայ, շուտ շուտ փոփոխելով: Սա ամենալաւ և կրտ-  
ռուկ դեղն է այրւածքի համար, ուստի անհրաժեշտ է ամեն ընտա-  
նիքի, մանաւանդ երեխաներ ունե-  
ցողներին, այս դեղից պատրաստի  
ունենալ:

Եթէ այրւածքը աւելի խիստ է, օդ-  
տաւէտ է աչքուածների վերայ ձկան  
կամ սագի իւղ քսել: Եթէ բշտիկներ  
են գոյացել, պէտք է ցանել սոդա  
կամ կարտոֆիլի ալիւր: Այրւածքը  
հովացնում է նաև թաց հողը, կամ  
քերած կարտոֆիլը: Եթէ վերք է  
գոյացել լաւ է դնել հետեւեալ

մահլամը — 5 մսխալ մեղրամոմ, 10  
մսխ. զէթուննի. իւղ միասին հալել,  
մէջը լցնել մի ձւի ղեղնուց և խառ-  
նել:

Ականջացան. Նըթ ականջից թա-  
րախ է գուրու դալիս, ականջը պէտք  
է լուանալ գոլ ջրով (սպըննցովկա) 2-3 անգամ օրական: Արսկելու ժամա-  
նականջը դէպի վայը պէտք է ըըռ-  
նելու ջուրը գու ըսթափուի: Նըթիկելուց  
ականջի մէջ պէտք է կա-  
յտոյ, ականջի մէջ պէտք է կա-  
թացնել շիբաջուր (1 գըշահատի  
ծալընդ շիբ լուծած մի բաժակ ջրում)  
2-3 կաթել:

Նթէ ականջացաւը յառաջացել է  
խոցից, որ գոյացել է ականջափողի  
մէջ, ականջի վերայ պէտք է մի  
նէջ, ականջի վերայ պէտք է մի  
գոյացել, առ տաք խաշել դնել պատ-  
քանի օր տաք խաշել դնել պատ-  
քանի օր տաք խաշել կաթեց, որ-  
ըստած կտաւատից և կաթեց, որ-  
պէս զի խոցը շուտ հասնի և ըւչի:  
Պոցը բլցելուց յետոյ, ականջը դար-  
խոցը բլցելուց յետոյ, ականջը դար-

Երեցուկի (օշոշ) ջրով: Աթէ ականցացաւը առաջացնել է մըսելուց, պէտք է վերան դնել տաք խաշիւ կամ բամբակ և կամ ականջի ետևը քսել եօդի թրմոց (յօձա) օրը մի անգամ, մինչեւ որ կաշին պլոկւի: Աթէ այս էլ չօդնէ, ականջի ետևը պէտք է կպցնել Սպանիոց Ճանձի սպեզանի (փայլեան եախու) բշտած տեղը ծակել ասեղով և վերան քսել մաքուր Ճրագու կամ անալի կարագ:

Աթէ ցաւը շատ սաստիկ է, օգտաւէտ է՝ 4 մսխ. դառը նշի իւղ, 1 մսխ. մեզրամում, 1 մսխ. դանիզասնի  $\frac{1}{2}$  մսխ. քաֆուրի բոլորը շինի ամանով եփել մաղաղ կրակի վերաց  $\frac{1}{4}$  ժամ, կտթացնել կամ պատրուգով ականջի մէջ դնել:

Անընոհթիւն. Անգլիացի բժիշկ Գիւկուլ առաջարկում է Հետեւեալ միջոցը. պէտք է գլուխը ծածկել վերմակով և այնպէս շունչը ներս

առած մնալ որոշ ժամանակ, որով և քունը կսկոչն վրայ կհասնի: Քնելուն պէս, արդէն առանց մարդու օդնութեան դուրս է Հանուում գլուխը: Այս բանը աւելի նկատելի է, ասում է բժիշկը, շների, կոտուների վերաց, որոնք մի քանի ըսպէքթերը ծածկում են թաթերի մէջ և կսկոչն քնում: Նայնն անում են և թռչունները, որոնք կտուցը, վեզը ծածկում են թևե տակ:

Աթէ այս չօդնէ, պէտք է թրջել թաշկինակի կէսը և թրջած մասը վզակոթին այնպէս, որ տապնել վզակոթին այնպէս, որ տապնել ծածկենակի չոր մասով ծածկել, իսթաշկինակի չոր մասով ծածկել, իսթաշկոյն հիւանդը կըքնի աւելի հանգիստ և առողջարար քնով: Առանցնապէս այս միջոցը լաւ է ազդում ուղեղացն հիւանդութիւն ունեցողներին, մտաւորապէս, հոգութով և վշտով ճնշւածներին:

Արևամնացահ. Ցաւը շուտ կըտ-  
րելու Համար բերանը պէտք է սառը  
ջուր առնել շուտ շուտ, որպէս զի  
ցաւող ատամի շուրջը միշտ սառը  
լինի. ոկզբում ցաւը կսաստկանաց,  
չետոց կհանդարտւի: Լաւ օգնում է  
նաև հետեւեալ դեզը. մանանեխի  
ոդի (горчицныи спиртъ)  $\frac{1}{2}$  դրախ-  
մա և ափիոնի օգեթը մասնութիւնը  
խառնած միասին, բամբակով  
դնել ատամի վրայ և շուտ շուտ  
նօրոգել: Լաւ է բերանը ողողել շե-  
րաջրով և թէյի բաժակ շիբ, լու-  
ծած մի բաժակ ջրում: Օգտաւէտ է  
նոյնպէս մեխակի իւզը բամբակով  
դնել ատամի վերայ:

Արևելյուծ. Այս հետանդութեան  
ժամանակ կղկղանքը մաղասանման  
է և արիւնախառն. Հետանդը զգում  
է ցաւեր աղիքնեխում. վարակիչ հե-  
տանդութիւնն (փոփոխող): Բժշկւե-  
լու ամենագլխաւոր պայմանը պա-

Հեցողութիւնն է (ճիշտա). պէտք է  
ուտել Հասարակ արգանակ (տուպ)  
կաթ. եթե խմիչք պէտք է գործ  
ածել տաք թէյ, անանուխի (դաղ-  
ձի) թէյ: Սառը ոչինչ չպէտք է  
խմել: Աղիքները մաքրելու Համար  
կարելի է ընդունել լուծողական տի-  
զականնեփի ձէթ (գէրջակի ձէթ) և զ  
հացի գոալ: Փորը պէտք է տաք  
պահել: Վտանգաւոր Հիւանդու-  
թիւնն է. բժշկի ներկայութիւնը ան-  
հրաժեշտ է:

Գիլրամալարութիջոց. Առաւօտները  
անօթի, ու զանի մի գտալ Հաճտը  
փոշին՝ խառն մէկ բաժակ անարատ  
կաթի հետ խմելով, ոկսում է մար-  
մինը գիրանալ:

Գյիւացահ. Քաթանը թրջել  
սառցաջրի, քացախախառն ջրի կամ  
ջրախառն օղբեկօնի մէջ և տը-  
րել գլուխը: Առհտուարակ պէտք է  
ճակատին սառը բան դնել, ինչպէս

սառը ջրում կամ քացախախառն ջրում թաթախած քաթան, թթու դրած կաղամբի տերե, աղարած կամ թթու դրած վարունդ երկու կէս արած, գետնախնձորը կէս արած և կամ թթու խմորը:

Սաստիկ գլխացաւի ժամանակ առողջ և չաղ մարդկանց, որոնց արեւնը գլուխն է խփել, (նշանները երեսն ու ականջները կարմրում են և ականջները խշում) սառուց կամ ձիւն դնել գլխին, մանանեխ (գարպահներ) դնել ծոճրակին և թողնել  $\frac{1}{4}$ — $\frac{1}{2}$  ժամ. տալ սառը խմէշքներ ինչպէս՝ խշափոշի (սօդա կիսլատա) զելտեր: Փորկապութեան ժամանակ տալ լուծողական:

Կիսագլխացար. Ցաւում է գլխի կէսը, գլխաւորապէս Ճակատը և քունքը: Պէտք է հանգիստ պարկել անկողնում և հոտ քաշել նաշատիքնի սպիրտ, մանանեխ դնել (գար-

պահներ): Ծոճրակին, ողնաշարին նոյնպէս և ոտների ձկներին: Գլուխունի վաթաթել մետաքոչ թաշկինաւկով. Ճակատին դնել սառը վաթելու կուլ. Ճակատին դնել սառը վաթելու օդտաւէտ է Ճակատին դնել լիմոնի կպէճը մինչև չորանալը: Տալ խմելու 10—20 կաթել Հովմանի կաթիլներ (гофманскія капли): Օգտաւէտ է խմացնել մեր բաժակ թունդ թէյ: Եթէ ցաւը շուտ շուտ կըբկնւում է, լաւէ աղդում քինաքինան (խանիք) 2 գրան օրական երեք անգամ:

Դեղնաւխտ. Այս հիւանդութեան ժամանակ մազմինը ամբողջ դեղին գոյն է ստանում. լաւ նշմարւում է աչքերի և եղունգների վերայ: Սովորաբար այս հիւանդութեւնը անցնում է ենքն իրան 2—3 շաբաթւայ ընթացքում: Եթէ հիւանդութիւնը սկսկւում է տաքութիւնով և ունեսկում է ցնցումներ, դել տալ (զա-

ռանցել) պէտք է ենթաղրել, որ  
վտանգաւոր է: Յաճախ այս հիւան-  
դութիւնը յառաջ է գալիս բարկու-  
թիւնից, վախից և կամ լեզի ան-  
կանոն գործունէութիւնից:

Բժշկելու համար հարկաւոր է  
թէթել լուծողական, ա:աք լոգարան  
(վաննա) կամ բաղանիքում երկար  
լողանալ կաշու գործունէութիւնը  
գրգռելու համար: Անհրաժեշտ է  
տալ միզաբեր գեղեք. լաւ միզաբեր  
դեղ է գինոյ պտուղը (մօյեվելինք  
յագօնի) 2—3հացի գդալ գինու պը-  
տուղ,  $2\frac{1}{2}$  բաժակ ջուր եփել և օ-  
րական մի քանի փինջան խմացնել:  
Ծանը դէպքերում անհրաժեշտ է  
բժշկի օդնութիւնը:

Դոդի դիմ՝ Արլ միջոց. Թարմ  
կիւրոնը (լիմոն) մանրացնելով, ջրի  
հետ ածում են կաթսան և այնքան  
ժամանակ եփ են տալիս՝ մինչեւ որ  
մի երբորդ մասը մնայ, յետոյ այս

եփւածքը սառեցնելով՝ անօթի լը-  
մում են:

Ծաղկի պատռաստելը. Ամե-  
նայարձար ժամանակը երեխաների  
համար 3—5 ամսական ժամանա-  
կամիջոցն է աշնապէս որ ատամ հա-  
նելուց առաջ կամ յետոյ լինի: Թոյլ  
երեխաների ծաղիկը կարելի է աւե-  
լի ուշ պատռաստել միայն թէ ծծից  
կտրած ժամանակ չինի: Զանազան  
հիւանդութիւնների ինչպէս՝ կարմիք  
քամու, քութէշի, կարմբուկի հա-  
մաժարակի ժամանակի, կարելի է յե-  
տաձգել աւելի յարմար ժամանա-  
կի: Խոկ ծաղիկ հիւանդութեան  
ժամանակ, պէտք է անպատճառ  
պատռաստել տալ, նոյն խոկ ամենա-  
փոքք նւազ երեխաներին: Նատան-  
գամ պատահում է որ պատռաստը  
չի բռնում (թարախակալում) դըա  
պատճառը կարող է երեխան լինել,  
որ անընդունակ է ծաղիկ (այս տե-

սակերեխանները ծաղկով չեն էլ հիւանդանում). կամ պատւաստը կանոնաւոր չէ եղել, ուստի պէտքէ միքանի անգամ փորձել վերջնականապէս համոզւելու համար: Պատւաստումը պէտք է կրկնել ամեն 7 տարին մի անգամ, որովհետեւ այդքան ժամանակամիջոց անցնելուց յետոյ, պատւաստի ոյժը թուլանում է:

**Կառապած գազանների կծածը.**

Անմիջապէս հարկաւոր է ամուր կապել վերքեց քեշ վերև և վերքե միջեց արիւնը դուրս քաշել բանկաչով (բաժակը դնել վերքի վերայ և տակից մի թուղթ վառել) և աշխատել, սրբան կարելի է արիւն շատ հոսեցնել: Կարելի է շրթունքներով էլ ծծել վերքեց թունաւոր արիւնը, միայն եթէ ծծողի շրթունքների և լեզւի վերայ վերքեր չկան: Արիւնը գուրս քաշելուց յետոյ, վերքը լւանակ աղի ջրով և ացրել վերքը որևէ

այրիչ միջոցով—կարբօլեան թթւուտով (բարබոլովայ կислотա) դժոխաքարով (լեապիս) տաքացրած երկաթով, թունդ արազով, նաշատիրնի սպիրտով, որը ձեռաց պատրաստի կդժնի: Այստեղ ևս անհրաժեշտ է թժկի օգնութեանը:

Հաւզ Թեթե հազը ինքն իրան կանցնի, եթէ հիւանդը իրան տաք պահի: Եթէ հազը սաստիկ է, օգտակար է խմացնել կրծաթէյ: (բրդհոյ զըն): Վերցնել մի հացի գդալ կրծաթէյ, եփել 2—3 բաժակ ջրի մէջ: Եթէ հազալուս կրծքում ցաւեր են զգացւում և կամ լինում է դժւարացնչութիւն, դնել կրծքի վերայ սաք փաթեթ, տաքացրած շոր, բամբակ կամ դնել կրծքին և թեկունքին մանանեխի սպեզանի (գարշիցնիկ): Լաւ է օգնում նոյնակէս տրոբել կուրծքը բեկեկնի իւղով (ըսկիպիտար) կամ թէ ճրագուով:

Հալրուիխի դեմ. Այս սեզանի  
գդալ քափուրի փոշին մի աման  
(չաշկա) եռացրած ջրի մէջ լուծել  
և նրանից բարձրացող գոլորշին 10  
— 20 ըսպէ հոտոտել՝ անմիջապէս  
թեթևութիւն կը զգացւի: Եթէ եկ-  
րովդ անդամ այս միջոցը կինւի,  
Հարբուխը բոլորովին կանցնի:

Լուծ. Չպէտք է խմել սառը  
խմիչք, մանաւանդ սառը ջուր, կաթ,  
գալիք ջուր և այլն. աւելի լաւ է  
խմել երիցուկի (ըամաշկա) թէյ,  
դազձի թէյ, սուրճ և այլն: Կա  
կապում է կաբմիր զինին երբ եփած  
է լինում մեխակի և գարշինի հետ:  
Օգտաւէտ է նոյնպէս ինոզմցեի  
կաթիլները 10—20 կաթ. օրական 3  
անդամ: Այն մարդիկ, որոնք տէպ  
լուծ են ունենում, պէտք է վորե-  
րին կապած ունենան տաք շոր, ոտ-  
ները չոր և տաք պահեն:

Երեխաների լուծի ժամանակ պէտք

է գնել վորին տաք խաչել կամ  
տաք չոր և եթէ լուծը սաստկանաչ,  
պատկեցնել տաք տեղաշորում և տալ  
միայն խմելու երիցուկի թէյ:

Մոլորուի դեմ միջոց. Առնել  
ու հաղարձն տերե (սմօրօնա) թէյ-  
ամանում լաւ եփ տալ և քամել.  
ապա առաւօտ երեկոյ մի մի ըամակ  
ընդունել. այս դեղը պէտք է շա-  
րունակել դեռ մի քանի ժամանակ  
էլ հիւանդութիւնն անցնելուց յե-  
տոյ:

Որ ծ. Ործողութիւն մեծ մա-  
սամք պատահում է զանազան հի-  
ւանդութիւնների սկզբում և կամ  
ինքնուրոյն ստամոքսի հիւանդու-  
թեան ժամանակ: Նարունակ կըր-  
կիւող ործողութիւնը դադարեցնելու  
համար, օգտաւէտ է կուլ տալ սա-  
համար, օգտաւէտ է մանր կտորներ (սիսեռի մեռ-  
ծութեամբ): Եթէ ործողութեան  
հետ պատահում է նաև ցնցումներ

պէտք է տալ անանուխի կամ զովմանի կաթիլներ 10—20 կաթ. օդում է նոյնպէս զելտերը:

ՈւշագնացողիթիհԱ. Մեծ մասամբ կանանց է պատահում և այն սեռական հիւանդութիւնների, հոգեկան յուզմունքների և արեան պակասութեան ժամանակ:

Հիւանդութեան նշանները գլխի, մէջքի, թիկունքի ցաւեր, մարմնի թուլութիւն, ականջների խշոց, սրտի թրթուց, ապա սկսում են ցնցումներ կամ ամբողջ մարմնի կամ ոտների ձկների, տըամադրութիւն վախի. լաց, ծիծաղ և այլն:

Հիւանդութեան սկզբում պէտք է տալ անուշագրի անխոնական օգի (հաշտիրո անսօնությա և առ ամեն երկու ժամը 10—15 կաթիլ կամ վալերեան կաթիլներ ամեն 2 ժամը 15—20 կաթ. Զդերի հանգստութեան և թիկունքի ցաւերը ան-

ցնելու համար մէջքը տրամել քառարու իւղով (հաշտիրո լեւուայ մաչ): Բացի այս, անհրաժեշտ է հիւանդի մարմինը ամբապնդել սըննդութարաը կերակութներ և խմիչքներ տալով (կաթ, կարագ, թերևսաշ ձու և այլն): Օգտաւէտ է սառը ջրի լոգարանը, մաքուր օդում զբօննելու, մարմնամարգարեւեամբ պարապելու: Պէտք է աշխատել որքան կարելի է շվերովուել:

Փորի տրախակ ձիառն. (սոլիտեր)

Նուան արձատի նոր կաշին  $\frac{1}{4}$ -ից մինչև  $\frac{1}{2}$  գըվանքայ ածել 2 զըրվանքայ ջրի մէջ և 12 ժամ այդպէս թողնելուց լիտոց, այնքան ժամանակ պէտք է եփել մինչև ոք  $\frac{1}{3}$  մասը մնայ: Այս եփած գեղը երեք մաս արած, ամեն մի մասը, ամեն առաւօտ անօթի պէտք է խմել:

— Հասարակ ճիճունների գէմ ընդունւած է զնդածաղիկները (լու-

рассказа — цытварное съмѧ) և тиրепе мѣ  
շաքарашի քաղցրացրած, մѣկ թէց կը-  
դալ, օրը 2—3 անգամ կամ մեզրա-  
խառն (4 մոխալ գնտածաղիկի սեր-  
մին 1/8 գրվ. մեզր):

Փորկապոյթինն. Յաճախ պա-  
տահում է նստակեաց կեանք վա-  
րող մարդկանց, ուստի նրանք պէտք  
է փոխեն իրանց ապրուստի ձևը.  
պէտք է օրական մի քանի անգամ  
1—2 ժամ զբունել, առանձին շար-  
ժումներ անել, ինչպէս փայտ կոտ-  
ըել, փայտ սղոցել ձի նստել այն-  
պէս որ բոլոր մկանները շարժման  
մէջ լինին:

Սաստիկ փորկապոյթեան դէմ,  
ամենալաւ միջոցը գրեխն է (օդնա)  
Հաստարակ գուլ ջուր վերջնաղեքից  
ներս թողնել մի քանի բոպէ, որից  
յետոյ անմիջապէս հիւանդը կըլու-  
ծէ: Եթէ շատ սաստիկ է ամբու-  
թիւնը և ջրով օդնան չի լուծում,

ջրի հետ կարելի է խառնել մի գը-  
գալ տիզականնեփի: ձէթ (գէրջակի):  
Խմելու իբրև լուծողական կարելի է  
տալ տիզականնեփի ձէթ 1—2 հացի  
գդալ: Լաւ լուծողական է նաև սի-  
նամաքի բոյսը (Александровскій  
листъ) եփած ճանճուլի հետ:

Քոհիթէշ. Հիւանդոյթեան ըսկլ-  
ըում լինում է տաքոյթիւն, Յ օրից  
հիւանդի մարմնի վերայ զուրս է  
տալիս կարմիր ցան մեծ մասամբ  
կրծքի և պարանոցի վրայ: Հիւանդի  
ըուկը ուռչում է. այս հիւանդու-  
թիւնից կարող է, առաջանալ ջրդո-  
զոյթիւն: Հիւանդոյթիւնը վարա-  
կիչ է. ուստի որ տան մէջ քոյթէշով  
հիւանդ կայ, պէտքէ առողջ երե-  
խաններին անպատճառ տանից հե-  
ռացնել, հակառակ դէպօւմ մէկը  
միւսի ետևից կվարակւեն:

Սաստիկ տաքոյթեան ժամանակ  
ճակատին գնել սառը փաթեթ.

բկուռուցքի Համար կոկորդը սրակել  
բերդալէտի աղաջրով (бертолитова  
солյ) եթէ երեխան Ենքը չէ կարող  
ողողել, 1 թէցի գոալ լուծած 1 բա-  
ժակ ջրում; Բժշկի օդնութեանը ան-  
հրաժեշտ է:

Ուկրացահի դեմ. Սեբերի Իր-  
գուռակեան նահանգում գործ են  
դնում մօշի խոտը (Երցնիկա). 1—2  
ունցիան մի դրվանքաց ջրում եփե-  
լով, կամ մի մասին ութ մաս ջուր  
լցնելով թէցամանում եռացնումեն  
և օրական 3 կամ 5 բաժակ խմում:  
Այսպիսով 3 շաբաթ—3 ամիս գոր-  
ծածելով շատ անգամ ամենասաս-  
տիկ ոսկրացաւն էլ է բժշկում: Այս  
զեղի բժշկութիւնը հաստատեցին  
Հերման և Սմիրնով բժիշկներն ևս:

—————

## IX. ԱՌՈՂՋԱՊԱԶԱԿԱՆ

Ըստդութիւննը պահպանելու  
գաղտնիքը.

Զպէտք է շտապել, շատ չպէտք է  
ուտել, քաղցած չպէտք է մնալ.  
պէտք է աշխատել թէ գիշերով և  
թէ ցերեկով մաքուր օդ ծծել. ան-  
հրաժեշտ է և բաւականաշափ հան-  
գստանալ. ձեռք բերածից պակաս  
պէտք է գործ դնել նեարդաշին ոչ-  
ժից. պէտք է աշխատել հողեկան  
լաւ տրամադրութեան մէջ լինել.  
պէտք է աղնիւ բաների վերաց մը-  
տածել և ոչ թէ խայտառակ և ան-  
պիտան բաների վերաց միտք չօգ-  
նեցնել. աշխատեցէք այնպէս, որ-  
պէս կանէք իւր պարտականութիւնը  
հասկացող մի մարդ, բայց ոչ այն-  
քան որ ձեր կազմւածքն ուժասպառ

ւինէք: Զեզ հեռուս պահեցէք կրքերից  
և յուզմունքներից, որովհետեւ շատ  
անդամ բոպէական բարկութիւնը  
ևս կարող է կորստաբեր հետևանք  
ունենալ մարգուս կազմուածքի վե-  
ւայ. Հազորդակցութիւն ունեցէք ա-  
ռողջ մարգկանց հետ, որովհետեւ  
առողջութիւնն էլ վարակիչ է այն-  
պէս, ինչպէս որ հիւանդութիւնը:  
Ողջ աշխարհիս հոգսը դուք միք  
քաշէ. երբէք չպէտք է յուսահատ-  
ւել. ամուսնացածները չպէտք է  
հակառակեն իրանց կանանց. թաց  
ու սառը ոտքերով երեէք չպէտք է  
քնել. սառը առարկաներին չպէտք  
է յենւել, կամ նստել զբանց վերաց.  
տանից գուրս գալուց առաջ պէտք  
է մի բան ուտել, իսկ եթէ ուտելու  
բան չկայ, լաւն այն է տանից դուքս  
չգալ. մարմնական զօրեզ վարժու-  
թիւններից յետոյ, վնաս է ձի նըս-  
տելք. աւելի լաւ է ոտով ման գալ:

## X. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Կծուած իոդի շահացնելը.

Կծուած իւղը կաթսայով դնել կը-  
սակի վրայ և լաւ տաքացնել. քա-  
շել երեսի քափը, քցել մէջը լաւ  
այրուած հացի կեղեւ. սա ընդու-  
նում է ևր մէջ լւզի վատ համը.  
2—3 բոպէեց յետոյ հանել հացի  
կեղեւը:

Կալիջ ձամաշէլը. Լաւ կաթը  
ջըեց մի քիչ ծանր է, այնպէս որ մի  
կաթելը նստում է ջրի տակը: Ա-  
նաբատ կաթը կաթեցնելսվ եղուն-  
գի վերայ, կաթելի կլորութիւնը չե-  
կորչի, իսկ ջրախառն կաթը ցլուում  
է և եղունգի վերայ չի կանգնում:  
Ջրախառն կաթը կապտագոյն է լի-  
նում: Աւելի հեշտ կերպով կաթը  
ճանաչելու համար, առնել գուլ-  
պայի ճաղ և ուղիղ եցեցնել կաթի

մէջ և իսկոյն արագութեամբ դուքս  
հանելու եթէ կաթի հետ ջուր չէ  
խառնած, ճաղի ծայրին կմնայ մի  
քեզ կաթ. իսկ եթէ քեզ ջուր ան-  
դամ խառնած լինի, ճաղի ծայրին  
կաթ չի մնայ և դուքս հանելիս  
ճաղը բոլորովին մաքուր կլինի:

Կարմիր գինու, բաշի եռ այլ  
բժերի հանելը. Կեղտոտ և բժեր  
ունեցող շորերը պէտք է արագու-  
թեամբ գցել եռացող կաթի մէջ  
նրա հետ մի քեզ տրուել և յետոյ  
մաքուր ջրով ողողել: Բժերի վերայ  
սապոն, աղ չպէտք է քսել, որով-  
հետեւ նրանք արգելք են լինում  
մաքքելու ժամանակ:

Փորձնածքներից իրդու են  
ձևապոտ բժերի հանելը. Բժերը  
պէտք է թրջել քենելնի եւզե մէջ,  
(սկիպիդար) յետոյ նախ փոքրիկ ըս-  
պունդով տրուել և ապա ձեռքերի

մէջ, բժերի վերայ մոխիս շաղ տալ,  
մի 10 զոտիկոց յետոյ այդ տեղերը  
խողանակով (շօտկա) պէտք է մաք-  
րել և այնուհետեւ բժեր այլ ևս չի  
մնայ: Եւզե հոտը ոչնչացնելու հա-  
մար՝ պէտք է սպիրտովլ լւանալ: Փո-  
խանակ սպիրտի, կարելի է բենզին  
գործածել, մանաւանդ եթէ գոր-  
ծւածքը գունաւոր է:

Մոմի բժերի հանելը. Սուած  
պէտք է դանակով զգուշութեամբ  
քերել, յետոյ այդ շորի տակը վլ-  
ոել մի կտոր թթջած կտաւ, մոմի  
բիծն էլ ծածկել մի քանի տակ ծալ-  
ւած ծծան թղթով և այդ թղթին  
քսել տաքացրած ութօ, վերջը ըս-  
պունդը թրջել սպիրտի մէջ և քսել  
բժերի տեղերի վերայ:

Թանաքի բժեր հանելը. Եթէ  
բեծը նոր է, այն ժամանակ բաւա-  
կան է այդ կտորը դցել տաք կաթի  
մէջ և մի քանի ժամ թօղնել:

Յետոյ կտորը փռել մի քանի տակ ծալած անձեռոցիկի (սաւանի) վերաց և սրբել մաքուր կտաւով։ Իւրաքանչիւր ըիծը պէտք է առանձին առանձին սրբել։ Զպէտք է թողնել որ կաթը շորի վրայ ցամաքի. Նախ տաք ջրով լւանալ, յետոյ սառը ջրով։

Այդը դրսած վարոհնագ. Վարունգը քաղելուց յետոյ, իսկոյն պէտք է աղաջրի մէջ դաբսել։ Աշունքին հանել աղաջրից, ածել մի երկու օր մաքուր ջրի մէջ, որ ազը դուրս դայ և նորից գարսելով ամանի մէջ՝ վերան ածել քացախ։

Թթու վարոհնագ. Փոքրիկ տակառի մէջ պէտք է ածել մարի, ալուբալի ծառի և հաճարի տերեներ, սամիթ և սխտոր, վերան մէկ շարք գարսել նոր քաղած վարունգ ուղղահայեաց դրութեամբ, վերան գարձեալ յիշեալ կանաչեղէնները և ապա վարունգ, մինչև տակառի

լրցւելը։ Ապա տակառը ծ ծիւելու փոքր ծակ ունեցող խո փով ուրոնցից մէկով պէտի օդը բաւառ դրնայ, միւսի մէջ դնել ձագարը և տաղուր ածել, որ այսպէս է պատրաստուում։ <sup>1/2</sup> վեղը ջրի մէջ խառնել և բաժակ աղ և լ գդալ բորակ (սելիտրա) յետոյ բերանը խցել։

Վարմիր պօրինանի ըոլացրած։

Հասածները միջից կէս անել, վերան աղ անել և փռել աըկե տակ որ լաւ չորանայ։ Պործ դնելիս վերցնել մի փոքրիկ ափսէի չափ, Յ ժամ թրջել ջուրը մի երկու անգամ փոխելով. ապա եփել, քամել և քամուկով գործ ածել արգանակի (սուպի) մէջ։

## XI. ԸՆՏԻՐ ՄՏՔԵՐ

— Ում կերքը յաղթում է խելքին՝  
նա կորած է:

— Մի վատնից ժամանակու, այդ  
այն նիւթն է, որից մարդու կեան-  
քըն է հիւսուում:

— Ծուլութիւնը այնպէս ծանը է  
շարժւում տեղից, որ աղքատու-  
թիւնը նորան շուտով է հասնում:

— Սէրն ու միաբանութիւնը այն  
անառիկ բերդերն են, որոնց դէմ  
ոչ ոք չի կարող պատերազմել և  
առնել:

— Ցիշիը անցեալգ, կշռեր ներկադ  
և քննիը ապագադ:

— Բաղդը հէնց նրան է յեմարա-  
ցնում, որին կործանելու է:

— Կեանքի մէջ բացի ողորմածու-  
թիւնից ուրիշ մի ճանապարհ չկայ:  
(Կոնֆուցիոս:)

— Ծնւած օրդ ուրիշներն էին ու-

րախանում իսկ դու լալիս, նայեր,  
մեռած օրդ երբ ուրիշները լաց կլե-  
նին, դու ուրախանաս:

— Բարի վարքը Ճշմարիտ իմաս-  
տութիւն է, իսկ գիտութիւնը միայն  
հոգու զարդ է: (Պղատօն:)

— Սիրտն աւելի շուտ է եփում,  
քար կտրում հտբատութեան մէջ,  
քան ձուն եռացող ջրի մէջ: (Լեւ-  
ովիկ Բէօրնէ):

— Թէ որ համբերելու շնորհը չու-  
նիս, ծանը գործի տակ մի մտնի:

— Լեզւիդ գուռը թէ որ միշտ  
բաց թողնես, քեզ համար շատ ցա-  
ւերի գոները կբացւին:

— Աշխատիք յաղթել քեզ և ոչ ու-  
րիշներին և աշխարհի վերայ կլինես  
մի հատ ամենափառաւոր յաղթող:

— Ծնողների ապերախտ օրդին-հը-  
րէշ է: Հայրենիքի կամ ազգի ա-  
պերախտը գաղան:

— Ոսկու ծարաւը միշտ կհանգնէ

մարդկային սրտի մէջ մարդկութեան  
ամեն զգացմունք:

— Իշխան ես, Հայրենեացդ Եշխել  
գիտցիք, զինուոր, Հայրենիքիդ ծա-  
ռացել մտածէ. գիտհւն Հայրենի-  
քիդ օգուտը մտածէ ու սովորեցրու.  
տգէտ գէթ Հայրենիքդ սովորիք և  
պահեք:

— Դաստիարակութիւն չունեցող  
մարդը՝ մարմին է անհոգի:

Ում սրտի մէջ սոկին է բնակւոմ,  
Հաւատ, չոչս և տէք գուռն են պը-  
տտուում.

— Երջանիկ լինելու Համար Երեք  
ըան է Հարկաւոր.— առողջ մարմին,  
աղատ միտք ու մաքութ սիրտ:

— Քանի գաղտնիքդ ութիշին չես  
յայտնելնա քո գերեն է, բայց երբ ու-  
ժիշին յայտնեցիք գունորա գերեն ես:



ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆ

ՃԵՄԱՐՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ

— Կանանց մեծ մասը սիրամարդներ են զբօսանքի ժամանակ, առուաւներ—տանը և աղաւնեակներ առանձնացած տեսակցութեան ժամանակ: (Դիւֆրէսն):

— Կնոջ սիրուց հարկաւոր է աւելի վախենալ, քան տղամարդի ատելութիւնից: Դա թոյն է, և աւելի վրտանգաւոր է այն պատճառով, որ հաճելի է: (Սոկրատէս):

— «Այու-ի և «Ոչ»-ի մէջ տեղը կինը չի կարող տեղաւորել նոյն իսկ ամենաբարակ ասեղը: (Սերւանտես):

— Գովեցէք կնոջ գեղեցկութիւնը և նա կներէ ձեւ բոլոր վերաւորանքները: (Բուաստ)

— Զկայ մի թակարդ, որ աւելի վտանգաւոր լինի՝ քան գեղեցիկ կենը վատ որտի հետ: (Բուաստ):

զքահաւորել իւր Հոտի մատաղերամ  
սերունդը:

Հանգուցեալ Հայրապետը ծնւել  
է 1813 թ. յուլիսի 5-ին Կ. Պոլսի  
Սամաթիա արուարձանում: Սկզբնա-  
կան ուսումն ու կրթութիւնը ստա-  
նում է Յովոչի անունով Պավել Մօտ  
(յետոյ քահանայ), ապա մանում է  
Գում - գափուի պատրիարքական  
գպըոցը, որտեղ և 1829 թ. աւարտե-  
լով, (1830) պատրիարքական փոխա-  
նորդարանի քարտուղար է նշա-  
նակւում: 1834 թ., Ճեռնադրուում է  
սարկաւագ, 1835 թ. վարդապետ:  
Մի տարի յետոյ նշանակւում է քա-  
րոզիչ Խառնդիւղի Ա. Ստեփաննոս Ե-  
կեղեցում ուրե նորա անխոնջ բնա-  
ւորութեան առաջ, գործունէու-  
թեան և չառաջադիմութեան ըն-  
դարձակ առպարէզ է բացւում: 1840  
թ. ստանում է պատրիարքական  
փոխանորդի պաշտօն, 1841 թ. յունվ,

## XII. ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

### ԳԵՂՐԻ Դ. ԿԱԹՈՒՂԻԿՈՒ

(† 1882 թ. Դեկտ. 6)

Ճեմարանի 25 ամեայ տապե-  
ղարձի առիթով:

„Ի վազուց անտի ես Համովւած  
էի, որ մեր ազգի վիրկութիւնը լու-  
սաւորութեան և կրթութեան մէջն  
է, ուստի և կոչմանս առաջին իսկ  
օրից ոյժիս մեծ մասը դորան եմ  
նւերելու:

Ահա այս խօսքերով է Հաշիւ տա-  
լիս Ճերունազարդ Հայրապետը իւր  
գործունէութեան տասն և Հինգ  
ամեայ տարեգարձի օրը. լոյս և գի-  
տութիւնն են եղել նորա միակ փըր-  
կարար զէնքերը, որով կամենում էր

